Արձանագրություն N 3

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

15.09.2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Արտակ Պողոսյանը, անդամներ՝ Արմեն Կուլախսզյանը, Հասմիկ Իփեքչյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ

Օրակարգ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:
2. «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատում և 1-ին և 2-րդ կետերի հիման վրա ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
4. Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

1. **<u>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:</u>**

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը 12.09.2017թ. հարցում ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: 2017թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվեց եզրակացությունը (կցվում է), համաձայն որի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը չունի ժամկետանց հարկային պարտավորություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներից, հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. **<u>Առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի և ընտրված մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ</u>**

- «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ-ն ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնահատման արդյունքները համարել բավարար, «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

3. **<u>Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:</u>**

Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

4. **<u>Պայմագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանն առաջարկեց անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ-ին: Հանձնաժողովը միաձայն ընդունեց Ա. Պողոսյանի առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Կուլախսզյան

_____ Հ. Իփեքչյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան